ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3118 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԲԵԼ ԺԵԼՅԱԲԻՆԻ ՉԱՐԽԻՖԱԼԱՔՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑԻ 4-ՐԴ ՇԱՐՔ N 19/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1278,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 11[00]-ից մինչև հոկտեմբերի 23-ի ժամը 11[00]-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 19/5 հասցեով (ծածկագիր 08-001-1157-0310) 1278,6 (մեկ հազար երկու հարյուր յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 12633000 (տասներկու միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 23 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 19/5 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 1278,6 (մեկ հազար երկու հարյուր յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1157-0310) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի